ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ֆիզիկայի լաբորատորիայի սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ԿԾԿԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-25/36 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-25/36 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի ապրիլի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ. Կատարողի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի և «Պրոտեխ-ԻՏ-ՈՒկրաինա» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-25/36 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն. ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի և «Պրոտեխ-ԻՏ-ՈՒկրաինա» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-25/36 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի «Ժամկետը» սյունակով նշված «Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի ապրիլի 30-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները» բառերը փոփոխվել և շարադրվել են նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի մայիսի 30-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները»:

Փոփոխության հիմնավորում. Պայմանագրի 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ**